

4866

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՎԵՀ. Տ. Տ. ԳԵՈՐԴ Ե.

Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԳԱԼԻՅՈՐԻՆՈՅ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՋՆՈՐԴ

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԷՆ ՏՐԱՊԵՂՆԻ



PATRIARCHAL BULL

OF

HIS HOLINESS KEVORK V.

CATHOLICOS OF ALL ARMENIANS

AND

A MESSAGE

FROM

ARMENIAN PRELATE OF CALIFORNIA
HOP KAREKIN OF TREBIZOND

1928

24

9-66

24
9-66

STOS 80 81

2386

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՎԵՀ. Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե.
Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՋՆՈՐԴ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԷՆ ՏՐԱՊԵԶՈՆԻ

USUALLY
1449
1591

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆԴԱԿ
ՍՏԵՊԱՆՈՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՍՏԵՊԱՆՈՎ

PATRIARCHAL BULL
OF

HIS HOLINESS KEVORK V.

CATHOLICOS OF ALL ARMENIANS

AND

A MESSAGE

FROM

THE FIRST ARMENIAN PRELATE OF CALIFORNIA
R. R. BISHOP KAREKIN OF TREBIZOND

1928

4691

18.03.2013

7066

Հրատարակում

Գալիֆորնիոյ եկեղեցասիրաց Միութեանց ծախով



23655-59



Ն. Ս. ՕՇՈՒԹԻԻՆ Տ. Տ. ԴԵՈՐԳ Ե.
ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
H. H. KEVORK V.

CATHOLICOS OF ALL ARMENIANS

Ք. 27082



ՀԱՅԲԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՏԱԿՏԻ ՃԱԿԱՏԸ
FRONTISPIECE OF THE PATRIARCHAL BULL

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ



(ԲՆԱԳԻՐԸ)



ԳԵՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՈՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌՍՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ:

Հայկազուն հարազատ զաւակաց մերոց բնակելոց ի հեռաւոր աշխարհն Ամերիկայի, ի քաղաքս եւ ի շէնս Կոպիֆորնիոյ, բարձրապատիւ վարդապետաց, արժանապատիւ քահանայից, յարգելի անդամոց երեսիոյ խանական ժողովոյ, մեծարելի վարչութեանց եւ հոգաբարձութեանց եկեղեցեաց եւ աղօթատանց Հայոց, աստուածահաճոյ եւ բարեգործական Միութեանց եւ Ընկերութեանց, մեծա-



պատիւ վաճառականաց, ժրջան արհեստաւորաց, արդարավաստակ երկրագործաց եւ քրտնաջան մշակաց, պարկեշտասուն տիկնանց եւ համեստափայլ օրիորդաց, ջանաւէր ուսանողաց եւ ուսանողուհեաց եւ համայն սիրեցեալ ժողովրդեան մերում որ ի Կալիֆորնիա, ողջոյն հայրապետական եւ օրհնութիւն ի Միածնաէջ Ս. Տառապէս եւ յԱթոռակալէս սրբոյ Հօրն մերոյ Լուսաւորչի Հայտաւան աշխարհիս.

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն աստուածային իջցէ եւ հանգիցէ ի ձեզ, առ ի կալ եւ մնալ համապագ բարեպաշտ կենցաղավարութեամբ, առաքինի եւ արդիւնաւէտ գործովք եւ սուրբ սրտիւք առ ազգն մեր, առ հայրենիս, առ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին եւ առ միմեանս:

Եւ ընդ տիրապարգեւ ողջունիս եւ հայրապետական օրհնութեանս ծանուցանեմք սիրելեաց առ ի մէնջ որդւոցդ, զի ընկալեալ մեր գլխաւորաբար-գրութիւն Երեսիտ-խանական ժողովոյ, իրագեկ եղաք եթէ, Երեսիտխանական ժողովն ընտրեալ է գմիաբան Մայր Աթոռոյս ԳԳԵՐԱ-պատիւ Տէր Գարեգին Եպիսկոպոս Խաչատրեան Առաջնորդ Հայոց Կալիֆորնիոյ եւ խնդրէ ի մէնջ հաստատել զնա: Հան եւ հաւան գտեալ ընդ այդ ընտրութիւն, մեք՝ այսու Հայրապետական Կոնդակաւս հաստատեմք եւ յայտարարեմք զառանձին քեմն Հայոց Կալիֆորնիոյ եւ ի պաշտաման Առաջնորդի նորոյ քեմն հաստատեմք զընտրեալն 'ի ձեռն Երեսիտխանական ժողովոյդ՝ զիոգեծին որդին մեր ԳՏԵՐ Գարեգին Եպիսկոպոս Խաչատրեան, զոր առաքեմք

առ Ձեզ եւ հայկ ի վերայ ամենեցունդ դնեմք ընդունել զԱռաջնորդն Ձեր եւ գտեսուչն Եկեղեցւոյ Քրիստոսի ըստ վաղեմի ջերմեռանդ սովորութեան, աջակից հանդիսանալով նմա յամենայն կրօնական եւ ազգային գործավարութեան իւրում, լսող եւ կատարող լինելով աւետարանական քարոզութեանց, հայրական խրատուց եւ յորդորանաց նորա, որք հային ի զարգացումն մարդկային բարոյական կենցաղոյս, 'ի պայծառութիւն ազգային եկեղեցեաց, ի կազմակերպումն եւ ի կարգաւորումն քեմնական եւ ազգային կրթական գործոց մերոց այդր:

Պանդուխտ ժողովուրդ Հայոց եւ սիրելի զաւակունք մեր, լուարով յինէն զաւանդն յաւիտեանական, զբարոյական պատուէրն մեծ, աւանդեալն յերկնաւոր վարդապետէն առ սիրելիս եւ առ հետեւողս իւր, եթէ՝ «Սիրեցէք գմիմեանս, զի Աստուած սէր է», եւ ընդ այնմ Փրկչական սիրոյն ի միտ առէք, զի համերաշխութիւն եւ միաբան եւ միահամուռ գործունէութիւն Ձեր կարէ յաղթահարել ամենայն արգելանաց եւ դժուարութեանց եւ յաջողեցին ամենայն գործք ձեռաց ձերոց, որք հային յերջանկութիւն եւ ի յառաջադիմութիւն ազգիս մերոյ, զի «զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց». ուստի ի բաց քօթափեցէք 'ի ձեմն զամենայն բշտամանս առ միմեանս եւ զկիրս կուսակցականս, զի այդու աւերի եւ կործանի տունն ազգային: Եւ միաբան եւ համերաշխ ոգւով աջակից եւ գործակից լինել նորոգ ընտրեալ եւ հաստատեալ Առաջնորդին եւ ամենեւեռն 'ի միտին յոռաջ վարել զամենատեսակ բարեկալատակ գործս, պահելով ի բարեկարգութեան եւ 'ի պայծառութեան զազգային եկե-

դեցիս, գուտումնաբանս եւ գամենայն զաստուածահանոյ
հաստատութիւնս ձեր:

Ձորդորդ հայրական կարդամք առ ձեզ. սիրելիք, զի
սիրեցիք զսուրբ եկեղեցին Հայաստանեաց, յոր հաս-
տատեալ կացչիք հանապազ կենդանի հաւատով, յուսով
եւ սիրով զի նահատակ եկեղեցին մեր ազգային, յընթացս
բազմադարեան գոյութեան իւրոյ, լեալ է դիեցուցիչ մայր
հարազատ, տալով գրիւրաւոր նահատակս, զբաւնացան
հովիւս եւ զհռչակաւոր հարս սուրբս, վասն յառաջողի-
մութեան եւ երջանկութեան ազգի մերոյ սիրելոյ, ըստ
կրօնականի, ըստ բարոյականի եւ ըստ մտաւորի: Եւ
այսօր Ս. եկեղեցին Հայաստանեայց շաղկապէ գրիւրա-
ւոր գաւազունս մեր, զցրուեալս եւ զտարագիր եղեալս ի
սփիւսս աշխարհի եւ միաւորէ գամենեսեան ազգային,
կրօնական եւ բարոյական զօրութեամբ իւրով ընդ հո-
վանեաւ Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի:

Յորդորեմք զձեզ գամենեսեանդ՝ պինդ պահել եւ սիրել
զմայրենի լեզուն մեր եւ զազգային դպրութիւնս եւ զպատ-
մութիւն, ուսանիլ եւ ուսուցանել զայնս գաւառաց ձերոց
դաստիարակելով զնոսա ազգային ողջմիտ ուղղութեամբ,
զի մի՛ օտարացին ի սպառ յազգէ մերմէ եւ ի հայրեն-
եացս:

Պատուէր հայրական տամք ձեզ, Տիկնայք Հայոց, որ
մայր էք եւ ամուսին, կեալ առաքինի գործովք եւ բարո-
յական վարովք, մի՛ երբեք պննասէր, անհամեստ, անաշ-

խատ, այլ միշտ ժրագլուխ, առաքինի, տնարար եւ հա-
մեստ, ուսումնասէր եւ որդեսէր, զօրացեալք կրօնասիրու-
թեամբ, ազգասիրութեամբ եւ հայրենասիրութեամբ:
Յորդորեմք զձեզ, սիրելի դստերք հոգեւորք, դաստիա-
րակել ի նոյն փրկաւէտ զգուցմունս գամենայն գաւազունս
ձեր, զի լիցին պիտանի անդամք Ազգի եւ մայրենի եկե-
ղեցոյ մերոյ:

Առ ձեզ են հայրապետական պատուէրք մեր, պաւտօն-
եա՛յք սրբոյ սեղանոյ Աստուծոյ, հովիւք հոգեւորք,
պարտ է ձեզ համապագ ի ժամու եւ ի տարածումս խրա-
տել եւ ուսուցանել զժողովուրդն Աստուծոյ եւ գամենայն
ճարագեալս ի ձեռն ջուցանել գործով, ըստ Աւետարանա-
կան բանին՝ «նախ սունել եւ ապա ուսուցանել», զի յայսմ
խկ են ամենայն օրէնք բարոյական վարդապետութեան:
Ձեզ յանձնեցաւ քանքարն ի Տեսունէ առ ի շահեցուցանել
եւ յաւելուլ, ուստի կատարեցէք զբարոյական եւ զկրօնա-
կան պարտիս ձեր ամենայն սրբութեամբ եւ ազատ լերուք
ի խղահարութենէ եւ ի պատասխանատուութենէ:

Աղօթեմք առ Ամենաբարին Աստուած. զի զօրացուցէ
եւ օրհնեցէ զձեզ եւ գամենայն բարեկալատակ զգործս եւ
ձեռնարկս եւ զաշխատանս ձեր, զորդիս եւ զքնտանիս
ձեր: Շնորհեցէ Տէր ձեզ ամենեցուն՝ երջանկութիւն
եւ իմաստութիւն, Ազգիս Հայոց՝ աստուածային այցե-
լութիւն, հայրենեաց մերոց՝ բարգաւաճում եւ անդոր-
րութիւն, ազգային եկեղեցոյս՝ հաստատութիւն, անսա-
սանութիւն եւ պայծառութիւն, եւ ամենայն աշխարհիս՝
խաղաղութիւն:

Ողջ լերուք, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւիտ օրհնեալ ի մէնջ. ամէն:

Վշտալի ԳԵՈՐԳ Ե.

Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս ամենայն Հայոց

ի 28 Նոյեմբերի 1927 ամի

ըստ Տումարիս ՌՅՀԶ,

ի Հայրապետութեան մերոյ ԺԶ ամի,
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի,

ի Վաղարշապատ

Թ. 1020

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

(ՍԵՆԱՐ ՀԱՐԱՐԸ)



ԳԵՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՑ ԷԶՄԻՍՏԵՒ:

Հեռաւոր Ամերիկայի՝ Կալիֆորնիոյ քաղաքներուն եւ գիւղերուն մէջ բնակող մեր հայկազուն հարազատ զաւակներուն, բարձրապատիւ վարդապետներուն, արժանապատիւ քահանաներուն, երեսփոխանական ժողովի յարգելի անդամներուն, հայոց աղօթատուններու եւ եկեղեցիներու ստատուածահաճոյ եւ մեծարելի վարչութեանց ու հոգաբարձուներու եւ բարեգործական միութեանց:

թեանց եւ ընկերութիւններուն, մեծապատիւ վաճառականներուն, ժրջան արհեստաւորներուն, արդարաւատակ երկրաւործներուն եւ քրտնաջան մշակներուն, պարկեշտասուն տիկիներուն եւ համեստաւայլ օրիորդներուն, ջանասէր ուսանողներուն եւ ուսանողութիւններուն, եւ Գալիֆորնիոյ ամբողջ մեր սիրելի ժողովուրդին հայրապետական ողջոյն եւ օրհնութիւն էջմիածնի Ս. Տաճարէս եւ Հայաստան աշխարհի մեր Լուսաւորիչ Ս. Հօրը արթնակալէս:

Աստուածային շնորհ, սէր եւ խաղաղութիւն թող իջնեն ու հանդէին ձեր վրայ, որպէսզի միշտ ապրիք ու մնաք բարեպաշտ կենցաղավարութիւնով, առաքինի եւ արդիւնաւէտ գործով ու սուրբ սրտով հանդէպ մեր ազգին, մեր հայրենիքին, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցիին, ինչպէս նաեւ իրարու նկատմամբ:

Եւ տիրապարզեւ ողջունիս եւ հայրապետական օրհնութեանս հետ կը ծանուցանենք ձեզ՝ մեր սիրելի որդիներուդ, որ ընդունելով Երեսփոխանական Ժողովի յայտարար-գրութիւնը, իրազեկ եղանք, թէ Երեսփոխանական Ժողովը Կալիֆորնիոյ հայոց Առաջնորդ ընտրած է Մայր Աթոռի միաբան՝ Գեր. Տ. Գարեգին Եպիսկոպոս Խաչատրեանը եւ կը խնդրէ ձեզմէ հաստատել զայն: Համամիտ ըլլալով այդ ընտրութեան, մենք՝ այս հայրապետական կոնդակով կը հաստատենք եւ կը յայտարարենք առանձին միճակ Կալիֆորնիոյ հայոց թեմը եւ նոր թեմի առաջնորդական պաշտօնին մէջ կը հաս-

տատենք Երեսփոխանական Ժողովիդ ընտրածը՝ մեր հոգեծին որդին Տ. Գարեգին Եպիսկոպոս Խաչատրեանը, զոր կը զրկենք ձեզի եւ ամենուդ վրայ պարտք կը դնենք ընդունիլ ձեր առաջնորդը եւ Քրիստոսի Եկեղեցիին տեսուչը վաղեմի ջերմեռանդ սովորութեան համաձայն, աշակից հանդիսանալով տնոր կրօնական եւ ազգային իր բոլոր գործավարութեանը մէջ, լսելով եւ կատարելով տնոր աւետարանական քարոզութիւնները, հայրական խրատներն ու յորդորները, որոնց նպատակն է մարդկային բարոյական կեանքի զարգացումը, ազգային եկեղեցիներու պայծառութիւնը եւ տեղիդ թեմական եւ ազգային մեր կրթական գործերու կազմակերպութիւնն ու կարգաւորումը:

Պանդուխտ ժողովուրդ հայոց եւ մեր սիրելի զաւակներ, լսեցէք ինձմէ յաւիտենական աւանդը եւ բարոյական մեծ պատուէրը, որ աւանդուեցաւ երկնաւոր Վարդապետէն Իր սիրելիներուն եւ հետեւողներուն, թէ «Սիրեցէք զիրար, զի Աստուած սէր է», եւ Փրկչական այս սիրոյն հետ միաքերնիդ պահեցէք, որ ձեր համերաշխութիւնն ու միաբան եւ միահամուռ գործունէութիւնը կրնան յաղթահարել բոլոր արգելքներուն եւ զժուարտութեանց: Եւ թէ այսպէսով պիտի յաջողին ձեր ձեռնարկած այն բոլոր գործերը, որոնք կը ձգտին ազգիս երջանկութեան եւ յառաջդիմութեան, վասնզի «միութիւնն է բարիքներու մայրը եւ անմիութիւնը չարիքներու ծնողը»: Ուստի մէկդի թօթափեցէք ձեզմէ իրարու հանդէպ ամէն տեսակ թշնամանք եւ կուսակցական կերք, զի ատով է որ կը կործանի ազգային սուրբ: Եւ միաբան եւ համերաշխ ողջով ա-

ջակից եւ գործակից եղէք նոր ընտրուած եւ հաստատուած առաջնորդին, ամէնքդ միասին յառաջ՝ վարելու համար ամէն տեսակ բարենպաստակ գործեր, բարեկարգ եւ պայծառ պահելով ազգային եկեղեցիները, ուսումնաբանները եւ ձեր բոլոր աստուածահաճոյ հաստատութիւնները:

Սիրելիներ, հայրապետական յորդոր կը կարգած ձեզի, որ սիրէք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին, անոր վրայ հաստատ կենաք կենդանի հաւատքով, յոյսով եւ սիրով, զի մեր ազգային նահատակ եկեղեցին, իր բազմադարեան գոյութեան ընթացքին եղած է հարազատ դիւցուցել ձայր մը՝ տալով բիւրաւոր նահատակներ, քրտնաջան հովիւներ եւ հոգակաւոր սուրբ հայրեր, մեր սիրելի ազգին կրօնական, բարոյական եւ մտաւոր յառաջդիմութեան ու երջանկութեան համար: Եւ այսօր ալ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին ի սիրեալ աշխարհի ցրուած ու տարագրուած մեր բիւրաւոր զաւակները իրարու կը կապէ եւ կը միաւորէ ամէնքը իր ազգային, կրօնական եւ բարոյական գործութիւնով, Ս. Էջմիածնի Մայր Աթոռիս հովանիին տակ:

Ձեզ ամէնքդ կը յորդորենք, ամուր պահէք ու սիրէք մեր մայրենի լեզուն, ազգային դպրութիւնը եւ պատմութիւնը, սորվիք եւ սորվեցնէք զանոնք ձեր զաւակներուն, դաստիարակելով զանոնք ազգային ողջմիտ ուղղութեամբ, որպէսզի չըլլայ թէ բոլորովին օտարանան մեր ազգէն եւ հայրենիքէն:

Հայրական պատուէր կուտանք ձեզ, հայոց աիկիւններ, դուք որ մայր էք եւ ամուսին, որ ապրիք առաքինի գործերով եւ բարոյական վարքով, մի՛ ըլլաք պճնասէր, անհամեստ, անաշխատ, այլ միշտ ժրագլուխ, առաքինի, տնարար եւ համեստ, ուսումնասէր եւ որդեսէր, զօրացած կրօնասիրութեամբ, ազգասիրութեամբ եւ հայրենասիրութեամբ: Կը խրատենք ձեզ, սիրելի հոգեւոր դուստրեր, նոյն փրկաւէտ զգացումներով դաստիարակել ձեր բոլոր զաւակները, որ ըլլան պիտանի անդամներ մեր Ազգին եւ մայրենի եկեղեցիին:

Ձեզի կ'ուղղենք մեր հայրապետական պատուէրները, ո՛վ Աստուծոյ սուրբ սեղանին պաշտօնեաներ, հոգեւոր հովիւներ: Պարտաւոր էք միշտ, անդուռ ու անդադար, խրատել եւ ուսուցանել Աստուծոյ ժողովուրդը եւ ձեր բոլոր քարոզածները գործով ցուցնել, ըստ Աւետարանի խօսքին «Նախ կատարել եւ յետոյ սորվեցնել»: զի ասոր մէջ են բարոյական վարդապետութեան բոլոր օրէնքները: Տիրոջմէն ձեզի յանձնուեցաւ քանքարը, շահեցնելու եւ աւելցնելու համար. ուստի ամենայն արդարութեամբ կատարեցէք ձեր բարոյական եւ կրօնական պարտականութիւնները, եւ ազատ եղէք խղճահարութենէ ու պատասխանատուութենէ:

Կ'աղօթենք Ամենաբարին Աստուծոյ, որ զօրացնէ ու օրհնէ ձեզ եւ ձեր բոլոր բարենպաստակ գործերը, ձեռնարկներն ու աշխատանքները, ձեր զաւակներն ու ընտանիքները: Թող Տէրը շնորհէ ձեզ՝ ամէնուղ երջանկութիւն եւ իմաստութիւն, Հայոց ազգիս՝ աստուածային



այցելութիւն, մեր հայրենիքին՝ բարգաւաճում եւ ան-
դորրութիւն, մեր ազգային եկեղեցիին՝ հաստատութիւն,
անսասանութիւն եւ պայծառութիւն, եւ ամբողջ աշխար-
հիս՝ խաղաղութիւն:

Ողջ ըլլաք՝ Սուրբ Հոգւոյն շնորհով զօրացած եւ յա-
ւէտ օրհնուած մեզմէ. ամէն:

Վշտալի Գէորգ Ե.

Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս ամենայն Հայոց

ի 28 Նոյեմբերի 1927 ամի
ըստ Տումարիս ՌՅՀԶ,

ի Հայրապետութեան մերոյ ԺԶ ամի,
յԱրարտեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի,
ի Վաղարշապատ
Թ. 1020

PATRIARCHAL BULL

OF

HIS HOLINESS KEVORK V.

CATHOLICOS OF ALL ARMENIANS



KEVORK, SERVANT OF JESUS CHRIST AND BY THE
INSCRUTABLE WILL OF GOD CHIEF-BISHOP AND CA-
THOLICOS OF ALL ARMENIANS, SUPREME PATRIARCH
OF THE NATIONAL EXALTED SEE OF THE ARA-
RATIAN CHURCH AT THE CATHEDRAL OF HOLY
ETCHMIADZIN:

To all true sons of Armenia now sojourning in distant Ame-
rica, in the cities and towns of California, to Right-Reverend
Vartabeds, to Reverend Priests, to the Honorable members of
Representative Assemblies, to the esteemed members of Boards

of Elders of Churches and Chapels, to all Charitable Unions and other Organizations acceptable to God, to Honorable merchants and skilled artisans, to honest farmers and hard-working tillers of the soil, to virtuous ladies and modest young ladies, to diligent boy and girl students and to all our people who have their homes in California,

Patriarchal Greeting and Benedictions from the Holy See of Etchmiadzin and from us, the successor to the Throne of our Holy Father, the Illuminator of the land of Armenia.

Let Divine Love, Grace and Peace visit you and abide with you, that you may live a life full of devotion, virtuous deeds and useful undertakings. Let the Holy Spirit bind your hearts with sacred ties to our Mother-Country, to the Holy Armenian Church and to each other.

Upon the occasion of delivering these God-given greetings and Patriarchal benedictions we wish to inform you, our beloved sons, that we have received a communication from your Assembly of Representatives, in which, after announcing that they have elected the Right-Reverend Bishop Karekin Khachadourian, a member of our Holy See, to the office of Prelacy in the Diocese of California, they asked us to confirm his election.

Their choice proving satisfactory to us, we hereby, by Patriarchal Bull, do give our consent to it and confirm it. We also announce the creation of a separate and distinct Diocese of California, and to the Prelacy of this new Diocese we appoint

the choice of your Assembly of Representatives, our Spiritual Son, the Right-Reverend Bishop Karekin Khachadourian. We are sending him to you and we bind you all to receive him as your Prelate and Overseer of the Church of Christ according to ancient pious usage.

We urge you all to co-operate with him in his religious and national activities, and to give a ready ear to his Evangelical Preachments, and Fatherly exhortations, whose sole aim and object will be the advancement of morality and the prosperity of our National Church, and the betterment of all educational and other works in your diocese.

Beloved sons of Armenia, sojourners far from your native land, let me remind you of the great moral precept which our Divine Teacher handed down to his followers: "Love ye one another, for God is love." Bear ever in mind that only through this love preached by our Saviour, you can show a united front against all hardships and tribulations of life, and overcoming them you will succeed in reaching your goal which is the welfare of our Nation.

In unity we find the source of all blessings, while inharmonious conduct leads to disaster. Therefore I entreat you not to entertain any hostile thoughts towards each other, and banish from amongst you strong party-feelings; for they are a menace to our National Life.

And I further entreat you to give a helping-hand to your

newly elected Prelate. Work together with zest and in harmony in all activities that lead to the splendour of the Church and the education of the people

As your spiritual Father, I advise you, my beloved people, to love and cherish the Holy Armenian Church. Be ever true to her. Support her with living Faith, Hope and Charity. Through all the past ages she has been a veritable mother nourishing her sons. Tens of thousands of Martyrs, spiritual leaders of the people and saintly Fathers, have sacrificed their lives that our Nation may advance in the paths of moral and mental progress. And to-day the Holy Armenian Church is the sacred tie by whose spiritual and religious force all Armenians throughout the world are bound together under the tutelage of the Holy See of Etchmiadzin.

I further advise you to love and not forget your mother-tongue, our National Literature and the History of our Nation. Study them assiduously yourself and teach them to your children. A rational education in these subjects will save them from being estranged from their Mother-Country.

Armenian mothers, I advise you to lead a virtuous life that is enriched with useful work. Beware of being frivolous and immodest, curb all love of finery, and do not indulge in idleness. Be studious and diligent in your work. Love and cherish your children. Sustained by religion, and imbued with our National spirit guide their footsteps that they become worthy members of our Mother-Church, and dear Nation.

Ministers of God, and Leaders of men, follow your holy calling earnestly, in time, and out of time. Teach and guide the people of God, practising first yourself what you preach.

The talents entrusted to your care by our Lord should be profitably invested. Perform your religious duties in all sanctity. Thus you will enjoy a clear conscience.

We pray the Almighty God to sustain you all with His Infinite Goodness, and bless you and all the members of your families. Let Him crown with success all your undertakings.

We pray Him to grant wisdom to our dear Nation and enrich it with all goodness and happiness. Let Him strengthen our Holy Church, granting her solidarity and stability and prosperity. And also peace to the whole world.

Strengthened by the Holy Spirit and with continuous benedictions on our part, abide in peace and health. Amen.

Sorrowful KEVORK V.

Supreme Patriarch and Catholicos of All Armenians

November 27, Year 1927

Armenian Calender Year 1376

Year 12th of Our Patriarchate,

Araratian Mother-See, of Holy Etchmiadzin.

Vagharshabad.

No. 1020.



ԳԵՐ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՏՐԱՊԵՉՈՆԻ
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԳԱԼԻՅՈՐԵՒՈՅ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՋՆՈՐԴԷՆ

Սիրելի Հայ ժողովուրդ Գալիֆորնիոյ

Հայրապետական օրհնածիր ողջոյնէն վերջ լսէ՛ նուէն
ողջոյնը քու անդրանիկ Առաջնորդիդ՝ որ քեզի կը բերէ
իր սրտի բովանդակ խանդակաթ սէրը՝ նուիրումի եւ գո-
հարերումի աւետարանաշունչ ուխտով խորացած աւ ցո-
րացած : Այդ Առաջնորդը, ինքն ալ խանդավառօրէն ա-
ռաջնորդուած գաղափարական ներշնչող լոյսով մը՝ որ
Յիսուսի աստուածային կեանքէն կ'արտացոլայ, հը հրա-
ւիրէ գրեզ մօտենալու իրեն մտերմիկ ու յրջմիտ համար-
ձակութեամբ մը, քաջելու իրեն հետ վստահութեամբ ու
հաստատակամ, լսելու իր հովուական թէկե անարուեստ՝
այլ սրտարուխ երգերը ու շաղրութեամբ եւ յօժարամբ



տութեամբ, աչերդ սեւեռած այն միակ նպատակովէ տին՝ որ բարի է ու գեղեցիկ, վասնոր ամենուս է ան:

Օտար, բայց հիւրընկալ այս երկրքին տակ, ուր բարոյ-
յական անդին գանձերու հետ նիւթն ալ ունի ա՛յնքան ան-
դիմադրելի եւ, աւա՛ղ, մերթ ա՛յնքան հիւծող հրապոյր-
ներ, մենք պարտաւոր ենք մեր մէջ մշակելու եւ առատու-
հոս ազբերացումով յայտնաբերելու ներքին այն քաղցր
ու բարեպաշտիկ սրբութեամբ օծուն սպրումները՝ ու-
րոնցմով մեր նախնիք կենցաղավարելու իմաստութիւնն
ունեցան անցեալի դուցէ աւելի շնորհալի ու երանաւտ
օրերու մէջ:

Այդ սպրումները մեղի կուտայ Հայաստանեայց Եկե-
ղեցին, մէկը Քրիստոսի Եկեղեցիին հարադատ պատկեր-
ներէն, այն սրբալոյս Ողիւմը՝ զոր առաջին դարերէն իսկ
ժառանգած է Աւետարանի կենդանի հաւատքէն: Այդ
հաւատքը, իր համամարդկային նկարագրովը տիեզերա-
կան, միս եւ արիւն դառնալու ընդունակ, տարրացած է
նաեւ Հայ Աղբին, Հայաստանեայց Սրտին մէջ, ծնունդ
տալով գիտակից նահատակութեամբ անմահացած անթիւ
դիւցադներու: Աւետարանին հաւատքը եղած է Հայուն
հաւատքը, որ իր առջեւ բացած է ճշմարիտ քաղաքակր-
թութեան մը փշոտ այլ լուսեղէն ճամբան, ճամբան բոլոր
ողջախոհ քրիստոնեաներուն եւ մարդոց միանգամայն:
Այգային արժէքները, իրենց էութեամբը աստուածա-
կերտ, վեր ամէն կաշկանդող ու մոլորեցնող հին ու նոր
նախապաշարումներէ, այդ հաւատքին մէջ գտած են միշտ

ու պիտի գտնեն յաւէտ իրենց նուիրագործումը, առանց
խանգարելու համամարդկային անհրաժեշտ Միութեան
գեղեցիկ ներդաշնակութիւնը: Ոչ մէկ արհամարհանք,
նաեւ ո՛չ մէկ անտարբերութիւն այդ սրբազան արժէքնե-
րու հանդէպ՝ կրնան գտնել իրենց արդարացումը կեանքի
իրականութենէն բխած ողջմտութեան առջեւ: Մերեւ
ի՛ր ժողովուրդը, անոր աւանդութիւնները, անոր սովո-
րոյթները, անոր լեզուն, անոր անցեալը, ներշնչուելի այդ
բոլորով, սիրելի ի՛ր հայրենիքը, ոգեւորուելի անոր գեղեց-
կութիւններովը, նուիրուելի անոր յառաջացման ու բարձ-
րացման, ա՛յնքան բնական է, հետեւաբար եւ անմեղա-
դրելի՝ որքան սիրելի իր սեփական կամ հօրենական տու-
նը: Եւ այս սէրը չհակասեր այն բարձր ու անխառն հա-
մակրանքին՝ որով բոլոր ազգերն անխափր, պահելով մէկ-
տեղ նկարագրի իրենց առանձնայատուկ դրոշմները,
պէտք է շաղկապուին իրարու, ապահովելու համար հա-
մամարդկային եղբայրութեան, Աստուծոյ թագաւորու-
թեան, հետեւաբար եւ աշխարհի խաղաղութեան եւ ընդ-
հանրական բարօրութեան իրականացումը:

Մարդասիրական եւ ազգասիրական բիւրեղացած զգա-
ցումները իրարու հետ սերտօրէն, ներդաշնակօրէն եւ
հրաշալիօրէն հաշտեցնող եւ Հայուն դարաւոր ու ան-
ձեռնմխելի աւանդը եղող Աւետարանի այս վսեմ Հաւատ-
քին է ահա որ կը հրաւիրէ զքեզ քու անդրանիկ Առաջ-
նորդդ, ո՛վ սիրելի հայ ժողովուրդ Գալիֆորնիոյ:

Յօժարկամ եւ սիրով եմ եկեր բարձրադպրակ մօտե-
տիկն ըլլալու քեզ այս շինարար եւ հրաշագործ հաւատ-

քին, մտածելու, խօսելու եւ մանաւանդ գործելու ա՛յդ հաւատքով քեզի համար եւ քեզի հետ :

Երբ առաջին անգամ Ս. Եկեղեցւոյ մէջ քեզ իմ ողջոյնի խօսքերս կ'ուղղէին՝ ըսի քեզ թէ ոչինչ պիտի ուզեմ քեզմէ՝ բաց եթէ զքե՛զ միայն : Երբ ունենամ զքեզ՝ կ'ունենամ ամէն բան : Եւ եթէ կ'ուզեմ ունենալ զքեզ՝ այդ դարձեալ քեզի համար է : Շահելով զքեզ՝ շահեցուցած կ'ըլլամ քեզ : Այդ շահը բացարձակապէս քուկդ է : Ոչ ասորը կամ անորը, այս խոմբին կամ այն խոմբին, այլ քո՛ւկդ, իւրաքանչիւր հայ անհատի՝ որ կ'ապրի այս նորակազմ Վիճակի սահմաններուն մէջ : Ձայն բաժնելու համար պէտք չիկայ ո՛չ հատու սուրբի, ո՛չ վերաւորող լեզուի, ո՛չ խայթող դրչի եւ ո՛չ իսկ մոռալոտ մտածումներու : Սէրը, միայն անձնուրաց Սէրը կրնայ երաշխաւորել արդար բաժանումը :

Եթէ կարենաս ըմբռնել այս ճշմարտութիւնը, օ՛հ, վստահ եմ թէ քեզ զժուար կամ զոնէ անկարելի պիտի չըլլայ մօտենալ՝ առանց դանդաղելու՝ նուիրումի եւ զոհաբերումի այն սուրբ ուխտին՝ որով յայտարարեցի քեզ թէ ստանձներ եմ քեզ ծառայելու այս նոր պաշտօնը : Այդ ուխտը քու ուխտդ ալ պիտի ըլլայ :

Այս քանի մը խօսքերը նկատէ՛ դու յառաջարան այն բոլոր իղձերուս, թելադրութիւններուս եւ յորդորներուս՝ որոնք աւելի յարմար առիթով մը կը խոստանամ զքե՛զ անհաճախել համար :

Վստահ թէ հայրապետական բարձր յանձնարարութեանց եւ հրահանգներուն հետ իմ այս սրտագին խօսքերն ալ կը դոնեն իրենց բարերար արձագանգը քու հոգեւոյդ խորը, կը մաղթեմ որ տիեզերքի գթառատ Հայրը իր երջանկառիթ օրհնութիւններով պտղաբերէ ամէնուէն անաչէն, եկեղեցատէր ու ազգասիրական բոլոր անխոնջ ու յարատեւ ջանքերը եւ նիւթական ու բարոյական զուարթառատ զոհողութիւնները :

Ողջունիւ ջերմ սիրոյ եւ օրհնութեամբ

Մ'նամ աղօթարար

Առաջնորդ Հայոց Գալիֆորնիոյ

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՐԱՊԵՉՈՆԻ

— :: —

A MESSAGE

FROM THE FIRST ARMENIAN PRELATE OF CALIFORNIA

Beloved Armenians of California.

After hearing the blissful greetings of our Supreme Patriarch and Catholicos of all Armenia, I would ask you to listen to a few words of greeting from your first Prelate, who comes to you with a heart overflowing with sincere affection, that is further fortified by his solemn vow of consecration and sacrifice. He himself having been guided by the radiant light that is reflected by the Personality of Jesus, now invites you to approach him in an intimate and thoughtful frankness, yes, walk with him with confidence and perseverance and listen willingly and attentively to his pastoral songs, even though they should lack in art. He would ask you to ever keep your eyes fixed on that one sublime aim which is the good and the beautiful, for it belongs to us all.

On this distant but hospitable shores, where among invaluable moral treasures, the material world is so full of attractions, at times even most debilating in seductiveness, we are in duty bound to cultivate in ourselves and manifest unequivocally the pious and soulful emotions that our forefathers had the good fortune to experience in the old and perhaps much happier days.

We may derive the self-same emotions from the Holy Armenian Church, a true image of the Church of Christ. She has inherited that shining and vivifying spirit from the living Faith of the Gospel, since the first centuries of Christianity. That Faith, universal in its scope, and possessing the quality of changing into flesh and blood, is incorporated in the Armenian Nation, and Armenian heart.

It was this spirit that gave birth to unnumbered heroes, who with conscious martyrdom won eternal glory.

This Faith of the Armenians had its foundation on the tenets of the Holy Gospel; this Faith has opened wide the shining, though thorny, road of civilization, and through this road have advanced all right-thinking Christians and other men.

Nationalistic values have been incorporated in the human race by God Himself, and if they are examined unbiased by ancient or modern prejudices, it will be seen that they have been sanctioned by this Faith; at the same time the beautiful

idea of harmonious and essential Unity of mankind is not destroyed.

Our scoffing at these sacred Nationalistic values and our indifference to them can never be justified if we judge the realities of life impartially.

To love one's own people, their traditions, their customs, their language; to be interested in their past and be inspired by it; to love one's own country, to be enthused over its natural sceneries and to take an interest in its welfare, I say, all these are as natural as our love for our own homes. And this love does not antagonize nor interfere with that high humanitarian ideal which tends towards binding with brotherly ties all the nations of the earth, while each still keeps its own individual characteristics.

Thus we may realize the Kingdom of God on earth. Thus shall prevail universal peace and universal prosperity.

Beloved Armenians of California, the first Prelate of your newly created Diocese entreats you to accept and adopt this sublime Faith, that reconciles so beautifully and harmoniously all humanitarian and nationalistic sentiments, a Faith that has been the inalienable and centuries-old heritage of the Armenian race.

I have come to you willingly and readily to proclaim to you in no uncertain voice the wonderful nature and the constructive

force of this Faith. With this Faith in me I will work for you and with you.

Upon my arrival here I addressed you a few words of greeting at our Holy Church. I said to you that I do not want anything from you but your own selves. If I have you, I have everything. And it's for your own sake that I wish to have you. By my winning you, you will be the gainers, and whatever you gain will be absolutely yours. It will not belong to this man or to that, to this group of people or that. It will belong to each single person that has his residence in this newly created diocese. To divide and distribute it equitably it's not necessary to have a sharp sword, or a stinging pen, or a biting tongue, or even a tragic thought. Only love, self-effacing love, will make a fair division and distribution.

When you have realized this fact it will not be hard, at least, it will not be impossible, for you to approach unhesitatingly and with ready steps to the great vow of consecration that I took when I assumed this Ministry. That vow will be yours too.

These few words are only introductory to all the suggestions and exhortations that I intend to give you in writing as occasions arise.

I feel confident, that combined with the high recommenda-



tions of our Supreme Patriarch, these sincere words of mine will find a ready response in your souls.


I pray that the All-Merciful Father of the Universe bountifully bless you for all the efforts and sacrifices that you are making for the support of your homes, for the glory of your Church and for the progress of your Nation.


With greetings of sincere love and blessing you all,

Prayerfully,

Prelate of Armenians of California

BISHOP KAREKIN OF TREBIZOND





ՀՀ Ազգային գրադարան



NL0160612

29

100